

ՄԵԶԲԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԶԱՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ
Ղաթիբյան Դ. Ա.

Հեղինակային իրավունքի շրջանակներում նախատեսված ազատ օգտագործման վերաբերյալ կարգավորումները պիտի լինեն այն գործիքները, որոնք հնարավորություն կտան անձանց օգտագործել ստեղծագործությունները, սակայն առանց հեղինակային իրավունքի ավելորդ խախտումների՝ այդպիսով հավասարակշռելով և՛ հեղինակների, և՛ ստեղծագործությունն օգտագործողների շահերը: Ազատ օգտագործման այդպիսի տեսակ է նաև մեջբերումներ կատարելու նպատակով օգտագործումը: Սակայն գործող նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք լիովին չեն կարող ապահովել իրենց առջև դրված հավասարակշռությունն ապահովելու խնդիրը, փոխարենը արդյունավետ կարգավորումներ նախատեսելը ինքնին կնպաստի նաև հեղինակային իրավունքի և դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների կայացմանն ու զարգացմանը:

Բանալի բառեր. հեղինակային իրավունք, ազատ օգտագործում, մեջբերումներ կատարել, հավասարակշռություն, բարեխիղճ օգտագործում, բարեխիղճ գործելակերպ:

Նախաբան: Հեղինակային իրավունքը բացարձակ և անսահման չէ, ուստի հեղինակային իրավունքի գործիքակազմում նախատեսվում են որոշ սահմանափակումներ: Հեղինակային իրավունքը չափավորված է իր սահմանափակումների նուրբ կառուցվածքով, որոնք անհրաժեշտ հավասարակշռող գործիքներ են՝ հաշվարկված այնպես, որ հատկացնեն ստեղծագործություններն օգտագործողներին բավականաչափ ազատություն՝ փոխգործակցելու այդ ստեղծագործությունների հետ [13, էջ 6]: Սահմանափակումների նախատեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հեղինակային իրավունքը ձգտում է պահպանել

հավասարակշռություն ստեղծագործող հեղինակների շահերի պաշտպանության և ավելի լայն հասարակական շահերի միջև [16, էջ 54]: Ընդ որում՝ այս գաղափարը դրված է նաև ՄՍՀԿ Հեղինակային իրավունքի պայմանագրի հիմքում¹ [2, Պրեամբուլա]: Հեղինակներին տրամադրվող չափազանց լայն պաշտպանությունը կարող է ճնշել ստեղծագործական գործընթացը [17, էջ 1108]՝ հանգեցնելով այնպիսի ծայրահեղության, երբ հեղինակը կարող է օգտագործել իր իրավունքները արմատախիլ անելու համար այն ստեղծագործակա- նությունը, որը հեղինակային իրավունքը ձգտում է «բռնկել» [10]: Ուստի ազատ օգտագործման տարբեր տեսակների, այդ թվում՝ մեջբերման նպատակով ազատ օգտագործման վերաբերյալ արդյունավետ կարգավորումներ նախատեսելը անհրաժեշտություն է՝ ապահովելու համար թե՛ հակադիր շահերի հավասարակշռումը, թե՛ հեղինակային իրավունքի և դրանով կարգավորվող հարաբերությունների զարգացումը և թե՛ ստեղծագործականության խթանումը:

Հեղինակային իրավունքի սահմանափակումների կիրառման հնարավորությունը նախատեսված է ոլորտի վերաբերյալ առկա միջազգային իրավական աղբյուրներում: Օրինակ՝ Բեռնի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանվում է, որ միության երկրների օրենսդրության իրավասությունն է թույլատրելու ստեղծագործություն- ների վերարտադրությունը որոշակի հատուկ դեպքերում՝ պայմանով, որ այդպիսի վերարտադրությունը չի վնասի ստեղծագործության բնականոն օգտագործմանը և անհիմն կերպով չի ոտնահարի հեղինակի օրինական շահերը: Այնուհետև, Բեռնի կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է «Ստեղծագործության ազատ օգտագործման որոշակի դեպքեր»-ը, որի 1-ին կետի (Մեջբերումներ) համաձայն թույլատրվում է մեջբերումներ կատարել ստեղծագործությունից, որն արդեն օրինական կարգով մատչելի է դարձել հանրությանը՝ պայմանով, որ դրանց կատարումը համատեղելի է արդար պրակտիկային, և դրանց ծավալը չի գերազանցում այն չափը, որն արդարացված է նպատակով՝ ներառյալ թերթերի հոդվածներից ու պարբերականներից մեջբերումները՝ մամուլի տեսությունների ձևով: Այսպիսով, Բեռնի կոնվենցիայով նախատեսված է մեջբերումներ կատարելու նպատակով ազատ օգտագործումը, որը թույլատրում է ստեղծագործությունների վերարտադրությունը երեքքայ- լանոց թեստի հիման վրա [14, էջ 23], այն է՝ թույլատրվում է

¹ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Հեղինակային իրավունքի պայմանագիր», Ժնև, 1996թ.-ի դեկտեմբերի 20:

ստեղծագործությունների վերարտադրությունը՝ 1. որոշակի հատուկ դեպքերում, 2. ստեղծագործության բնականոն օգտագործումը չվնասելու պայմանով, 3. հեղինակի օրինական շահերն անհիմն կերպով չտնահարելու պայմանով:

Իր հերթին հեղինակային իրավունքի սահմանափակումների մասին դրույթներ է պարունակում նաև ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի պայմանագրի 10-րդ հոդվածի 1-ին կետը, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերը կարող են իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսել նույն Պայմանագրի հիման վրա գրական և գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակներին տրամադրվող իրավունքների սահմանափակումներ կամ բացառություններ որոշ հատուկ դեպքերում, որոնք չեն խոչընդոտում ստեղծագործության բնականոն օգտագործմանը և անհիմն կերպով չեն վնասում հեղինակի օրինական շահերը (թարգմանությունը կատարված է հեղինակի կողմից):

Անդրադառնանք նաև Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) շրջանակներում գործող օրենսդրությանը՝ հաշվի առնելով, որ այն ընդհանուր բնույթ է կրում ԵՄ անդամ երկրների համար: Այսպիսով, «Տեղեկատվական հասարակության մեջ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների որոշակի ասպեկտների ներդաշնակման մասին» դիրեկտիվում² (այսուհետ՝ Դիրեկտիվ) ուղղակիորեն սահմանված է տարբեր կատեգորիաների իրավատերերի միջև, ինչպես նաև տարբեր կատեգորիաների իրավատերերի և պաշտպանված առարկաներն օգտագործողների միջև պետք է ապահովվի իրավունքների և շահերի արդար հավասարակշռություն [3, Պրեամբուլա]:

Այժմ, ուսումնասիրության նպատակներից ելնելով, կներկայացնենք մեջբերումներ կատարելու նպատակով ազատ օգտագործման հայաստանյան օրենսդրական կարգավորումները՝ նկարագրելով դրանց բնույթը և նշանակությունը, ներկայացնելով միջազգային փորձից օրինակներ, ինչպես նաև կանդրադառնանք շրջանառության մեջ դրված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորումներին:

Այսպիսով, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) հոդված 22-ում սահմանում է, որ

²Directive 2001/29/EC of the European Parliament and of the Council of 22 May 2001 on the Harmonization of Certain Aspects of Copyright and Related Rights in the Information Society.

ազատ օգտագործում է համարվում առանց հեղինակի համաձայնության և վարձատրության, սակայն հեղինակի անվան և ստեղծագործության սկզբնաղբյուրի պարտադիր նշումով ստեղծագործության օգտագործումը, որը չի հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին և չի վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը: Նշվածից երևում է, որ օրենսդիրը, հիմնվելով Բեռնի կոնվենցիայի դրույթների վրա, թույլատրում է ստեղծագործությունների ազատ օգտագործման հնարավորությունը՝ երեքբայանոց թեստին համապատասխան: Ի տարբերություն գործող կարգավորման՝ Նախագծով հավելվում է, որ նույն օրենքով նախատեսված իրավունքների սահմանափակումները կարող են կիրառվել կոնկրետ սահմանափակման նպատակն ապահովող ծավալով, ինչպես նաև հեղինակի անվան և ստեղծագործության սկզբնաղբյուրի նշումով, եթե նման նշումն անհնարին չէ: Սահմանափակումները կիրառվում են պայմանով, որ չեն հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին և անհիմն կերպով չեն վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը [5, հոդված 34]: Այլ կերպ, Նախագիծը հատուկ նշում է, որ սահմանափակումները կարող են կիրառվել սահմանափակման նպատակն արդարացնող ծավալով: Քիչ չեն այն դեպքերը, երբ այդ նպատակն արդարացնող ծավալը կարող է հանդիսանալ ողջ ստեղծագործությունը, ուստի կարևոր է, որ այդպիսի հնարավորությունը նախատեսված լինի օրենքով՝ պաշտպանելով նաև ստեղծագործություններն օգտագործողների շահերը: Բացի այդ, հաշվի առնելով ստեղծագործությունների բազմազանությունն ու առանձնահատկությունները, դժվար է նախապես կանխորոշել դրանց օգտագործման հստակ սահմաններն ու ծավալները:

Ինչ վերաբերում է կոնկրետ մեջբերումներ կատարելու նպատակով ազատ օգտագործման տեսակին, ապա Օրենքը որպես ազատ օգտագործում թույլ է տալիս գիտական, հետազոտական, բանավիճային, քննադատական և տեղեկատվության նպատակով օրինական ճանապարհով հրապարակված ստեղծագործության քաղվածքների մեջբերումը (ցիտումը) բնագրով կամ թարգմանաբար, այդ թվում՝ թերթերի և ամսագրերի հոդվածներից քաղվածքների վերարտադրումը մամուլի տեսության ձևով՝ մեջբերման նպատակն արդարացնող ծավալով [4, հոդված 22, 2-րդ մաս, «ա» կետ]: Նախագիծը իր հերթին նույնպես պարունակում է նմանատիպ կարգավորում, այն է՝ գիտական,

հետազոտական, բանավիճային, քննադատական և տեղեկատվության նպատակով օրինական ճանապարհով հրապարակված ստեղծագործություններից մեջբերումը (ցիտումը) սահմանափակ ծավալով այլ ստեղծագործության մեջ կարող է ազատ օգտագործվել՝ պայմանով, որ պահպանվում է բարեխիղճ գործելակերպը [5, հոդված 42]:

Այսպիսով, թե՛ Օրենքը, թե՛ Նախագիծը թույլ են տալիս մեջբերումներ անելու տեսքով ստեղծագործությունների ազատ օգտագործումը՝ միաժամանակ սահմանելով դրա համար որոշակի պայմաններ, այն է՝ ստեղծագործությունը պիտի հրապարակված լինի, իսկ մեջբերումն էլ իր հերթին պիտի հետապնդի միայն սահմանված նպատակները: Ավելին, Օրենքը թույլատրում է մեջբերումների տեսքով քաղվածքներ անելը, իսկ Նախագիծը՝ սահմանափակ ծավալով մեջբերում անելը՝ երկու դեպքում էլ անուղղակիորեն արգելելով մեջբերման նպատակով ողջ ստեղծագործությունն օգտագործելը:

Վերոգրյալի համատեքստում գտնում ենք, որ նման կարգավորումը չի համապատասխանում մեջբերումներ անելու էությանը: Հատկապես Նախագծի դեպքում նման կարգավորումը ինքնին հակասության մեջ է գտնվում Նախագծով սահմանված հեղինակային իրավունքի սահմանափակումների վերաբերյալ հիմնական հոդվածի հետ, որով ազատ օգտագործումը թույլատրվում է սահմանափակման նպատակն արդարացնող ծավալով:

Անդրադառնալով Օրենքով և Նախագծով սահմանված մյուս պայմաններին՝ նկատենք, որ մեջբերումները կիրառելի են բոլոր տեսակի ստեղծագործությունների նկատմամբ [15, էջ 246], ուստի որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել նաև մեջբերել ամբողջ ստեղծագործությունը [15, էջ 247]: Ընդ որում՝ այսպիսի մեկնաբանությունը բխում է հենց Նախագծում մեջբերումների համար նախատեսված բարեխիղճ գործելակերպի բնույթից: Օրինակ՝ անգլիական դատական գործերից մեկում դատավորներից մեկը նշել է, որ կարող է օգտագործվել նույնիսկ ամբողջ ստեղծագործությունը՝ հավելելով, որ մեջբերված մասի ծավալը (քանակը) հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտարկել մեջբերման բնույթի և նպատակի լույսի ներքո [11]: Մեկ այլ դեպքում, երբ պատասխանող կողմը օգտագործել էր հայցվորի կատարած լուսանկարը, որը իրենից ենթադրում էր անձի դիմանկար՝ աջակցելու համար քրեական հետապնդմանը, Եվրոպական միության արդարադատության դատարանը գտել էր, որ որոշակի հատուկ դեպքերում, օրինակ, քրեական հետապնդմանը աջակցելու

նպատակով կարելի է մեջբերել ամբողջ լուսանկարը [12]: Կարծում ենք, որ ստեղծագործության ամբողջ ծավալով մեջբերումը կարող է անհրաժեշտ լինել այլ դեպքերում ևս, օրինակ՝ քննադատության նպատակով ապրանքի կարգախոսն օգտագործելու դեպքում՝ ապահովելով այդպիսի մեջբերման քննադատողական բնույթը կամ փոքրածավալ ձայնագրության օգտագործումը, որի առանձին մասի օգտագործումը չի ապահովի մեջբերում կատարելու նպատակը և այլն:

Իր հերթին, մեջբերում կատարելու համար նպատակների սահմանափակ շրջանակ նախատեսելը, կարծում ենք, նույնպես նպատակահարմար չէ: Ստեղծագործություններն ու դրանց արտահայտման ձևերը, եղանակները ամեն օր, ամեն պահի զարգանում են: Անհնար է այսօր կանխատեսել, թե ինչ նոր գաղափարով հանդես կգա մարդկային միտքը վաղը: Դժվար թե մի քանի տարի առաջ կարելի էր պատկերացնել, որ այսօր սոցիալական կայքերում բավականին լայն տարածված մեմերը կհանդիսանան հեղինակային իրավունքի օբյեկտ [18, էջ՝ 1040]: Հատկանշական է, որ այս ստեղծագործությունները հիմնականում ստեղծվում են շնորհիվ հեղինակային իրավունքի սահմանափակումների, երբ, օրինակ, ֆիլմերից վերցվում են որոշակի կադրեր, դրանց ավելացվում են տարբեր մեկնաբանություններ, և արդյունքում առաջանում է նոր ստեղծագործություն: Վերադառնալով թեմային՝ նշենք, որ մեջբերումները ևս միտված են ապահովելու հավասարակշռությունը հեղինակի և ստեղծագործությունն օգտագործողների իրավունքների միջև: Հետևաբար, մեջբերումների ձևով ազատ օգտագործման հնարավորության անհարկի նեղացումը կարող է անտեղի սահմանափակել ազատ արտահայտման իրավունքը [15, էջ 246]: Ուստի այն չպետք է սահմանափակվի որոշակի նպատակներով [15, էջ 246]:

Այս առումով օրինակելի են Միացյալ Թագավորության կարգավորումները: Մասնավորապես, «Հեղինակային իրավունքի, դիզայնի և արտոնագրերի մասին» օրենքում (այսուհետ՝ ՄԹ օրենք) քննադատության և վերանայման ձևով կատարվող օգտագործումները կարգավորվում են առանձին, իսկ մեջբերման ձևով կատարվող օգտագործումները՝ առանձին [6, բաժին 30]: Մեջբերման մասով նախատեսված է հեղինակային իրավունքի խախտում չի համարվում ստեղծագործությունը մեջբերելու ձևով այն օգտագործելը (անկախ այն հանգամանքից, թե դա արվում է քննադատության, վերանայման կամ այլ նպատակով), եթե՝ ա) աշխատանքը հրապարակվել է, բ) մեջբերումն

արվում է բարեխիղճ գործելակերպով, գ) մեջբերման չափն ավելին չէ, քան անհրաժեշտ է օգտագործման համար, դ) մեջբերումը բավարար նշում է պարունակում հեղինակի վերաբերյալ [6, բաժին 30 (1ZA)]: Ինչպես նկատում ենք, ՄԹ օրենքը չի պարունակում այն անուղղակի արգելքը, որն առկա է Օրենքում և Նախագծում: Իրենց բնույթով իմպերատիվ սահմանափակ չեն նաև Ճապոնիայի [7, հոդված 32(1)], Գերմանիայի [8, բաժին 51] և այլ, հատկապես անգլոամերիկյան իրավական համակարգի երկրների կարգավորումները: ԱՄՆ կարգավորման համաձայն՝ ստեղծագործության բարեխիղճ օգտագործումը, ներառյալ՝ այդպիսի օգտագործումը օրինակների կամ հնչյունագրերի վերարտադրման ձևով կամ ցանկացած այլ ձևով, այնպիսի նպատակների համար, ինչպիսիք են քննադատությունը, մեկնաբանությունը (...), հեղինակային իրավունքի խախտում չէ [9, բաժին 107]: Իսկ օգտագործումը համարվում է բարեխիղճ, երբ համապատասխանում է սահմանված չորս գործոններին՝ 1. օգտագործման բնույթը և նպատակը՝ ներառյալ այն հանգամանքը, թե արդյո՞ք նման օգտագործումը առևտրային բնույթի է, թե առանց շահույթի հետապնդման ուսուցողական նպատակների համար, 2. հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության բնույթը, 3. օգտագործված մասի քանակը և էականությունը՝ համեմատած հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության հետ որպես ամբողջի, 4. օգտագործման հետևանքը հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության հավանական շուկայի կամ արժեքի վրա [9, բաժին 107]:

Այսպիսով, ԱՄՆ կարգավորումը նույնպես չի սահմանափակում օգտագործման հնարավոր ձևերը՝ դրանցից առաջ պարունակելով «ներառյալ» տերմինը և այդպիսով թվարկված ցանկը դարձնելով չսահմանափակված, եթե այն համապատասխանի վերոնշյալ չորս գործոններին:

Եզրահանգում: Այսպիսով, ներկա պահին ազատ օգտագործման ենթաինստիտուտը Հայաստանում բավականաչափ զարգացած չէ, ինչի մասին է վկայում նաև խիստ սակավաթիվ դատական պրակտիկան, որտեղ առկա գործերից և ոչ մեկում պատասխանող կողմը չի փորձել պաշտպանվել մեջբերումներ կատարելու նպատակով ազատ օգտագործման պաշտպանությամբ: Օրենքով նախատեսված կարգավորումը, իր հերթին, չի համապատասխանում արդի աշխարհի գիտական և մշակութային պահանջներին: Չնայած Նախագծով փորձ է

արվում շտկել առկա իրավիճակը, սակայն միաժամանակ պահպանվում են որոշ հակասական կարգավորումներ: Ուստի գտնում ենք, որ պետք է նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք կհամապատասխանեն ժամանակի պահանջներին, միջազգային փորձին և ընդունակ կլինեն պահպանել հավասարակշռությունը հեղինակների իրավունքների և հասարակական լայն շահերի միջև, քանի որ հենց իրավական ճիշտ գործիքակազմի նախատեսումը կարող է լուրջ ազդակ հանդիսանալ հեղինակային իրավունքի և դրանով կարգավորվող հարաբերությունների զարգացման համար:

ОГРАНИЧЕНИЯ СВОБОДНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ С ЦЕЛЬЮ ЦИТИРОВАНИЯ В АВТОРСКОМ ПРАВЕ АРМЕНИИ

Гарибян Д. А.

Положения о свободном использовании в рамках авторского права должны быть инструментами, позволяющими посторонним лицам использовать произведения без необоснованного нарушения авторских прав. Таким образом балансируются интересы как авторов, так и пользователей произведения. Таким же видом является использование с целью цитирования. Однако изучение действующих норм показывает, что они не могут полностью обеспечить задачу балансирования, которая поставлена перед ними. А эффективное регулирование, напротив, само по себе будет способствовать установлению и развитию авторского права и регулируемых им общественных отношений.

Ключевые слова: авторское право, свободное использование, цитирование, балансирование, добросовестное использование, добросовестное поведение.

LIMITS OF FREE USE FOR QUOTATIONS IN THE COPYRIGHT LAW OF ARMENIA

Gharibyan D. A.

The clauses on free use in the Copyright Law should be tools allowing other persons to use the work without unreasonable copyright infringements, thus balancing the interests of both authors and users of the work. One of the kinds of free use is use for quotation purposes. However, a study of the current norms shows that they cannot fully meet the balancing task that is set before

them. On the other hand, effective regulations will itself contribute to the establishment and development of the Copyright Law and the social relations regulated by it.

Keywords: copyright Law, free use, quotation, balancing, fair use, fair dealing.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին» 1886թ.-ի սեպտեմբերի 9-ի Բեռնի կոնվենցիա:
2. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության «Հեղինակային իրավունքի պայմանագիր»: Ժնև: 1996թ.-ի դեկտեմբերի 20:
3. Directive 2001/29/EC of the European Parliament and of the Council of 22 May 2001 on the Harmonization of Certain Aspects of Copyright and Related Rights in the Information Society
4. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենք: ՀՀՊՏ 2006.07.12/38(493) Հոդ. 816:
5. ««Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/3166/about> (11.03.2021):
6. United Kingdom, Copyright, Designs and Patents Act 1988
7. Japan, Copyright Act (Act No. 48 of May 6, 1970)
8. Federal Republic of Germany, Act on Copyright and Related Rights, (Urheberrechtsgesetz, UrhG), Copyright Act of 9 September 1965 (Federal Law Gazette I, p. 1273)
9. Copyright Law of the United States and Related Laws Contained in Title 17 of the United States Code
10. James Castle Collection and Archive, LP v. Scholastic, INC.; and Allen Say, an individual, Case No. 1:17-CV-437-BLW, In the United States District Court for the District of Idaho
11. Hubbard and Another v. Vosper and Another, Authoritative version at: [1972] 2 Q.B. 84, [1971 C. No. 7360] (Court of Appeal)
12. Eva-Maria Painer v. Standard VerlagsGmbH, Axel Springer AG, Süddeutsche Zeitung GmbH, Spiegel-Verlag Rudolf Augstein GmbH &Co KG, Verlag M. DuMont Schauberg Expedition der Kölnischen Zeitung

- GmbH & Co KG, Judgement of the Court (Third Chamber), 1 December 2011, Case C-145/10
13. Hugenholtz P., Bernt and Senftleben M. Fair Use in Europe: In Search of Flexibilities. November 14, 2011. p. 30
 14. Xalabarder R. Study on Copyright Limitations and Exceptions for Educational Activities in North America, Europe, Caucasus, Central Asia and Israel. Standing Committee on Copyright And Related Rights. Nineteenth Session Geneva. December 14 to 18. 2009. p. 214
 15. Bently L., Sherman B., Gangjee D. and Johnson P. Intellectual Property Law. Fifth edition. Oxford University Press. 2018. p. 1382
 16. Griffiths J. Fair Dealing in the Law of Copyright. Nottingham Law Journal. 1999. 8. No. 1. P. 54-59
 17. Leval P.N. Toward a Fair Use Standard. Harvard Law Review 103. P. 1105-1136
 18. Levinson L. Adapting Fair Use to Reflect Social Media Norms: A Joint Proposal. 64 UCLA Law Review. 2017. P. 1038-1079

Տեղեկություններ հեղինակի մասին
Ղարիբյան Դ. Ա. – մագիստրանտ
Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ՝ gharibyan.davit@yahoo.com

Տրվել է խմբագրություն՝ 16.05.2021
Գրախոսվել է՝ 06.01.2022